



ՕՐԱԳԻՐ ՉՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Ի ԲԵՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՄԻՒՌՆԻԱ ՇԱՐԱԹ 8 ՅՈՒՆԻՍԻՐ 1877

ԹԻՒ 1057

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հորիզոնն միշտ թանձր և մութ ամպօք բեռնադրեալ կերէի . հետեւաբար տաղնապալից է քաղաքային իրաց կացութիւնն , զոր մինչև ցայսօր ոչ կարողացան բարեփոխել 'ի Կ. Պօլիս գումարեալ եւրոպական գեապանաժողովոյն խորհրդակցութիւնքն : Այս պատճառաւ , զինուորական գործունեայ պատրաստութիւնքն կը շարունակեն միշտ թէ 'ի կողմանէ Բարձրագոյն Դրան և թէ 'ի կողմանէ Ռուսիոյ : Պատրաստութիւնք 'որք թէ և պատերազմական են , սակայն կրնան նաեւ նպաստամտոյց լինել 'ներկայ դժուարութեանց խաղաղասիրական կարգադրութեանը : Ստոյգ է թէ Մոսկուայի օրագիրն՝ Բարձրագոյն Դրան ընդդիմութիւնն յառաջ բերելով վասն մէկ մասին առաջարկութեանց եւ շեղելով նմա , կրտէ թէ՛ «Ռուսիան պատերազմի վիճակի մէջ չգրաւ իւր զօրաբանակներն՝ միայն սպառնական ցոյց մի ընելու համար , ինչպէս կը կարծեն Անգլիոյ , Աւստրոհունգարիոյ և Թուրքիոյ տէրութիւնքն» : Սակայն մեր կողմանէ կրնամք պատասխանել թէ յիշեալ լրագրոյն այս մի քանի տողքն ևս սպառնական ցոյց մըն է , յաւելցնելով թէ Բարձրագոյն Դրան ալ զինուորական այսպիսի ահագին պատրաստութիւններ որ ըրաւ և կընէ , իւր նպատակն անշուշտ գլուխ ծռել չէ՝ գեապանաժողովոյն ծանր առաջարկութեանց առջև , որք ըստ մեծի մասին անընդունելի են : Օսմանեան կայսերական կառավարութիւնն՝ ըստ թղթակցին Տէլի Եւրոպայի լոնտոնի կըմբոժէ 'ի յիշեալ առաջարկութեանց զհետեւեալն . 1. Զկազմութիւնն մի-

ջազգային (էնթէրնաթոնալ) յանձնաժողովոյն վասն հսկելոյ զգործադրութիւնն վարչական նոր բարեկարգութեանց . 2. Զգրաւումն Պուլղարիոյ 'որ և է օտար զինուորական զօրութեամբ . 3. Զմիջամտութիւնն եւրոպական տէրութեանց 'ի կարգումն կուսակալաց վասն ապստամբեալ գաւառաց . 4. Զգործակցութիւնն միւսնոյն տէրութեանց վասն կարգադրութեան տրոց յիշեալ գաւառաց , և մի քանի այլ առաջարկութիւնք : Իսկ Բարձրագոյն Դրան 'ի փոխարէն այս առաջարկութեանց մերժելոյ , յիւրմէ , ուրիշ հաւանաբարներ ըրաւ , որք հետեւեալքն են՝ ըստ վէճենայի ԴԱԿՊԱԹ օրագրոյն .

1. Օսմանեան կառավարութիւնն կընդունի զկարգումն քրիստոնեայ կուսակալի 'ի Պուլղարիա , սակայն կըմբոժէ յանձնառու լինել բացարձակապէս քրիստոնեայ կուսակալներ կարգել միշտ նաեւ Պոսնիոյ և Հէրսէկովինի գաւառաց համար :
2. Կըմբոժէ զզինուորական օտար զբաւումն որ և է օսմանեան գաւառի և անօգուտ կհամարի զզինութեամբ ընելն մահմետականաց , վասնզի այսուհետեւ քրիստոնեայք ևս զենք պիտի կրեն :
3. Բօժարամիտ է ընդունել զՏրինա գետն իբրեւ սահմանադրուի Սերբիոյ . սակայն կպնդէ որպէսզի սերբիական բերդերն քանդուին և պատերազմական ծախուց փոխարէնն վճարուի Բ. Դրան 'ի սերբիական իշխանութեանէ :
4. Կայսերական կառավարութիւնն իրաւացի կըհամարի Գառատաղի խնդիրն վասն կարգադրութեան սահմանադրուց իւրոց , կընդունի նաեւ զնորհումն նմա՝ Սերբիայի նաւահանգստին , բայց այնու պայմանաւ որ Գառատաղի իշխանն

հպատակ և հարկատու հրատարակէ զինքն օգոստոսիաւ Սուլթանին .

Կըհաւաստեն թէ Բ. Դրան այս հաւանաբարներն համակրական սիրով ընդունուեր են յերկուց անգամոց գեապանաժողովոյն , այսինքն յերեսփոխանաց Գաղղիոյ և Իտալիոյ , որք գրեթէ հետեւեալ կերպիւ խօսեր են .

«Եւրոպան կըփափաքի տեսնել զվերահաս տատութիւնն խաղաղութեան . և տարակոյս չկայ թէ տէրութեանց մեծարգոյ ներկայացուցիչքն՝ որք գումարեալ են 'ի Կ. Պօլիս առ 'ի ապահովել զայս խաղաղութիւն , ամեն կերպիւ կաշխատին առ 'ի հեռացնել այն դէպքերն՝ որք կրնան խռովել զներդաշնակութիւնն Եւրոպական համախոհութեան : Արդ ուշադրութեամբ քննելով նախապատրաստական ժողովոց մէջ եղեալ օրոշումներն և բաղդատելով զայնոսիկ հաւանաբարկութեանց հետ , զորս Բարձրագոյն Դրան կըներկայացնէ գեապանաժողովոյն , առնոց մէջ այնքան մեծ տարբերութիւն մի չը տեսնուիր , որպէսզի անկարելի լինի համաձայնութիւն մի գոյացնելու : Մեր աշխատութեանց նպատակն աստ՝ ոչ այլ լինչ է բայց միայն վերահաստատութիւնն խաղաղութեան . ուստի կարող եմք անկեղծաբար ջանալ գտնել գործնական եղանակ մի վասն 'ի ձեռս բերելոյ զյիշեալ նպատակն . և կարծեմք թէ զգործնական եղանակն կըտեսնեմք խաղաղասիրական և հաշտարար ոգւոյն մէջ , որով ներշնչեալ են Բ. Դրան հաւանաբարկութիւնքն» :

Ինչպէս կըտեսնուի , գեապանաժողովոյն անգամներէն ոմանք արժան և հարկ կըհամարին նկատողութեան առնուլ զհաւանաբարկութիւնն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՒՅՐ ԱՐԳԱԴԻՐ

Վայելցադուք հարստեանց մեծա . Մ. Կարապետի Արապեան ընդ լիաշնորհ Ազալի կուսի ,

Դասի Բեհայասի - Մ. Խալաթ - Մ. Բեհայասի (1)

Նոր օր պայծառ նոր և արփի ծագի այսօր բերկրալի յորապասի 'ի հարանիս երկ - Ամուլից քաղաքի ,

Աստուածատունի գրախտին հանգոյն պանծայ արդ Տուն Արապեան Նախաստեղծից բերեալ զորիպ 'ի սրբավայրն իշխմանն :

Նրիտասարդ գօտէպնգեալ ջահ 'ի ձեռին Հիմէնի ,

Ի յառապատ սրբազանեալ անմահ սրբոյն արփենի ,

Ըղհեզանազն ընտիր կուսան ըզլիաշնորհն Ագալի

Հարսն ընկալեալ և ճոխանայ որպէս զԱգամ յեւայի :

Աստուածազոյգ նախահարսին և փեսային առաջնոյ

Անանջրպետն միութեան կրկնի պատկեր մշտագոյ .

Չոր լուսածին Հարսն երկնից եկեղեցի փրկատուի

Սրբագործեալ 'ի Մեծ Խորհուրդ և յայս Ամուլ փարելի

Կազմէ զոսոս նոր օթարան և օթնարփենին շնորհաց իւր

Մաղիկի որպէս զարմաւենի բեղմնաւորիլ լուսասիրիւ :

Չեղ , ո՛ր Ամուլ սիրաբողոք , մայրն Հայաստան յիւրն 'ի վին ,

Ի բիւրակնեան ուղիսից ծփինս , յանոյշ 'ի սիւղ . Չեփիւռին

Երգս յօրինէ , երգ սիրային և մարդարտի փոխանակ

Մարգարտայեա տեղոյ զօրհնիս 'ի գլուխս Չեր խաչապալ :

Չեր օրհնեսցի Պսակ փառաց ոսկեղինիկ սիրայօդ .

Չեղ բարբար լիցին երկինք 'ի ցօղ 'ի շաղ և 'ի յօդ .

Եւ կուռ տարերք մի՛ մեղիցեն ձեզ մի՛ լուսին և արեւ ,

Աստղն Հայկայ հովանացի զՉեօք յամայր մշտատն :

Այս են մեր իղձք և այս մեր ուխտ , կեցլիք յաւէտ երջանիկ ,

Կեցցէ՛ և Տուն ձեր յաւիտեան ցորչափ չնչն զօդ մարդիկ :

Զմիւռնիա , 19-31 Դեկ. 1876 : Ա. Ս. Յ. ՊԱՆԱՊԱՆԵԱՆ

(1) Զմիւռնոյ ազգային ֆաղաբական ժողովոյն տեսնապետն է . որոսմ մատուցանէ զայս բարեբա՛ պատուելի զօսատուն հայկաբանութեան և կրօնական վարդապետութեան 'ի Մեարդիան ազգային վարժարանի բաղաբիս :

Մի ոմն 'ի հայկազուն բարեկամաց մերոց՝ յեւրոպա բնակեցոց , գլետագայ յօդուածն յուղարկեալ է մեզ 'ի հրատարակութիւնն :

ԵԿԵՂԵՑԻ ՀՈՅՈՑ ՅԱՄՈՒՆԻՏԱՄ

..... Հազիւ հազ յլմադերտամ ժամանեցինք , ինձ ընկերացած հոլանտացի բարեկամիս ըսի , թէ փափագիմ երթալ Հայոց եկեղեցին տեսնել , Զիտեմայ պիտի եկեղեցի Ասող երտամի մէջ , պատասխանեց նա , սակայն պահ մի խորհելէ զինի , յաւելուց . Հայոց եկեղեցի ասելով՝ Պարսկական եկեղեցի՛ կիմանաք արդեօք .

Ենթադրելով որ մեր գաղթական Հայերն ժամանակաւ Պարսկաստանէն հոս չուերով՝ հոլանտացիք Պարսկական աղդ ճանցած և հետեւապէս իրենց եկեղեցւոյն ևս Պարսկական անունը տուած են , (թէպէտեւ հուսկ յետոյ ուրիշ հոլանտացիներու հետ խօսելով՝ անոնք կատարեալապէս Հայ անունը կուտային մեր եկեղեցւոյն) , բարի , Պարսկական եկեղեցի , հոն առաջնորդեցէք զիս , ասացի , ու կառք մի կանչելով զրուցեցինք կառավարին հոն ուղղել զմեզ , Տասն վայրկենի չափ շրջապայէզ զինի , կառքը կանկ առաւ պարզ տեսքով տան մի առջև . Տարակոյս չկար որ հոս էր Հայոց եկեղեցին քանզի տան դրան ճակատը հայկական մեծ տառերով յիշատակագրութիւն և խաչ մի կար , մարմարեայ քարի վերայ փորագրեալ .

Կըխտտովանիմ , որ նոյն վայրկենին խիստ տխուր խորհրդածութիւններ ունեցայ Եւրոպիոյ հիւսիսային մէկ ծայրը , հայրենիքէ 3000 մղն հեռի , օտար քաղքի մէջ , հայկական եկեղեցւոյ մի առջև գտանէի , զոր գրեթէ 200 տարի առաջ Հայ գաղթականներ կառուցած էին Այժմ եկեղեցին հոն էր բայց ուր էին Հայերը Անհամբերութեամբ կառքէն դուրս ցատկեցի և տան դուռը դարկի : Գլխովեան քոյր մի դուռը բացաւ , և մեղմիկ ձայնով հարցուց թէ ինչ կուզէք : Հայոց եկեղեցին կըփափաքիմ տեսնել , պատասխանեցի , Կոյսը զարմացմամբ ինձ կընայէր : Այո՛ ըսաւ այս հայկական եկեղեցի էր ժամանակաւ , սակայն մի քանի տարի առաջ կրօնական ընկերութիւն մի ծախու առնելով՝ նոյնը այժմ նորառի աղքատ մանկանց դպրոց է : Այս անակնկալ լուրը զիս առաւել վրդովեց և ինքնօրէն կըսէի , «Ինչպէս : Հայոց եկեղեցին Հայոց կըվերաբերի , ո՞վ իրաւունք ունի նոյնը վաճառելու» , և խնդրեցի բարեսէր կոյսէն որ հաճի ինձ այս մասին տեղեկութիւններ հաղորդել : Ներեցէք , ըսի , հետաքրքրութեամբ զոր

սըն Բ. Դրան, զորս յարակցելով օսմանեան նոր Սահմանադրութեան ազատասիրական սկզբանցն լիովին կըկատարուի Եւրոպայի փափաքը վստահաբար կ'ստանայ իր թուրքիա . հետեւաբար կը յուսամք թէ գետնաշին ժողովոյն միւս անդամքն ևս պիտի չյապաղին համաձայնելու Գաղղիոյ և իտալիոյ ներկայացուցիչ աղամակցաց իւրոց . մանաւանդ որ կըլտեմք թէ ամսոյս 3ին երկուշաբթի օրն եղած գումարման մէջ գետնաշին ժողովոյն ծրագրոյն մի քանի փոփոխութիւններ եղեր են . Բայց որովհետեւ կատարեալ որոշում մի չէ տրուեր, հարկ համարուեր է որ առաջիկայ շաբաթ օրն այսինքն այսօր նոր խորհրդակցութիւն մի լինի :

Զիարդէիցէ, մեք կարծեմք թէ երկուստեք այսինքն թէ 'ի կողմանէ Բ. Դրան և թէ 'ի Եւրոպայի տէրութեանց կողմանէ անկեղծ յօժարամտութիւն կայ փոխադարձ զիջումներ ընելու վստահաստատութեան խաղաղութեան . առ որ պարտիմք յուսալ ջորչալի որ թնդանօթն չորտար : Բայց մեր յոյսը չկրնար հաւասարիլ Կ. Պօլսոյ լրԱԳԻՐ պատուական թերթին վստահութեանն որով կըպնդէ թէ «պատերազմ չպիտի ըլլայ», թէ և 'ի բոլոր սրտէ կըփափագիմք որ իւր փաստարանեալ վստահութիւնն հիմնաւոր լինի :

Ամսոյս 2ին կիրակի օրն բարձրաւ Մեծ-Եւրոպոս Միթհատ փաշան հաճեցաւ այցելութեան երթալ Կ. Պօլսոյ Երեսնաց ամենապատիւ Ս. Պատրիարքին, 'ի փոխարէն այցելութեանն զոր ընկալաւ 'ի Նորին Սրբազնութենէ Գաւրպան Պայրամի առթիւ : Այսպիսի պաշտօնական պատիւ մի որ ազատասիրական և քաղաքակրթական սկզբանց գեղեցիկ արդիւնքն է, կարծեմք թէ երբեք չէ եղած որեւէ հպատակ ազգայնութեան հողեւոր գլխոյ մի :

—Կայսերական կառավարութեան անօրէնութեամբն երեք յանձնաժողովք հաստատեցան 'ի Բ. Դրան . յորոց առաջինն ընդ նախագահութեամբ Զէվտէտ փաշայի, պաշտօն ունի խմբագրել զկանոնադրութիւնն գաւառական վարչութեանց ըստ նոր Սահմանադրութեան, երկրորդն որով պիտի նախագահէ Սէրվէր փաշան պիտի զբաղի տպագրութեան օրինաց ծրագիրն շինելու : Իսկ երրորդ յանձնաժողովքն, ընդ նախագահութեամբ Զիա փաշային, պիտի աշխատէ

ընական պիտի գտնէք երբ իմանաք թէ ես իսկ Հայ եմ, և հեռաւոր երկրէ կուգամ իմ ազգային եկեղեցին տեսնելու համար :

Եթէ գիտէք պարոնայք թրափայլինս, Վերթհայմ և Բուհն փաստարաններուն ասոնցմէ ձեր փափագած տեղեկութիւններն կրնաք ընդունել, պատասխանեց բարի կոյսը, և միանգամայն հրաւիրեց զիս եկեղեցին տեսնել :

Եկեղեցին սեպտեմբերի եկեղեցւոյ ձև չունի, այլ պարզ ընդարձակ սրահ մի հարաւային կողմը փողոցին վերայ, վեց պատուհաններով : Հետաքրքրութեամբ ամեն կողմ կրնայի թէ արդեօք Եկեղեցւոյ սեփական նիւթ կամ յիշատակութիւն մի կրնամ գտնելու . բայց 'ի զուր, ինչու որ սեղան կամ ատեն իսկ չկար, ամէն ինչ այլայլած էր : Այս սրահին մէջ 100ի չափ նորատի մանկունք կըկրթուէին Գիթութեան Բերց հոգատարութեամբ :

Տան երկրորդ գետիկոնը ևս մի քանի սենեակներ կային, նոյնպէս երրորդ գետիկոնը զոր կրօնական ընկերութիւնը նորոգ բարձրացուցած էր :

Շնորհակալութիւնս յայտնեցի բարի կոյսին, և եկեղեցիէն հեռանալէ առաջ, փութացայ օրինակել եկեղեցւոյ ներքին և արտաքին դրանց վերայ գտնուած հայերէն յիշատակագրութիւնքը : Եկեղեցւոյ ներքին դրան ճակատը հետեւեալը գրուած էր, զոր կընշանակեմք առանց կէտի մի այլայլութեան :

«Վերանորոգեցաւ դուռս 'ի թուոյ Փրկչին 1749 հանդերձ լայնացուցմամբ և բարձրացումամբ դաւիթ և մարմարոնեայ սալապատիւ ընդ որմին, և գեղեցկապէս ծաղկմամբ առաստաղին : Արդեամբ Զուղայեց-

տի օսմանեան երեսփոխանական ընդհանուր ժողովոյն ներքին կարգադրութիւնքն շինելու :

Ահաւորիկ պաշտօնական թարգմանութիւնն օսմանեան Սահմանադրութեան հրատարակելոյ 'ի 11 Դեկտեմբերի 1876 ամին : (1)

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. Օսմանեան կայսրութիւնը կըբաղկանայ իւր այժմու սեփականութիւնն եղող երկիրներէն և առանձնաշնորհեալ գաւառներէն :

Անբաժանելի ամբողջութիւն մը կըկազմէ, որոյ ոչ մէկ մասը չկրնար երբեք անջատիլ ինչ պատճառաւ և լինի :

Յօդ. 2. Կ. Պօլսոյ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքն է : Այս քաղաքը կայսրութեան միւս քաղաքներէն տարբեր յատուկ արտօնութիւն կամ առանձնաշնորհութիւն մը չունի :

Յօդ. 3. Օսմանեան վեհապետութիւնն, որ իսլամութեան գերագոյն խալիֆայութեան հետ վեհապետին անձին վրայ կըմիանայ, Օսմանայ ազգատոհմէն եղող կայսերազանց երիցագունին կըվերաբերի՝ ըստ վաղուց 'ի վեր հաստատեալ կանոնաց :

Յօդ. 4. Վեհա Սուլթանն, իբրեւ գերագոյն խալիֆա, մահմետական կրօնին պաշտպանն է, միանգամայն ամեն Օսմանցւոյ վեհապետն ու ՓԱՏԻՇԱՆ է :

Յօդ. 5. Վեհա Սուլթանը պատասխանատուութենէ ազատ է : Իւր անձը նուիրական է :

Յօդ. 6. Օսմանեան կայսերական ազգատոհմին անդամաց ազատութիւնը, անձնական անշարժ և շարժական ինչքը, և ցկեանս յատկացեալ թոշակն ամենուն երաշխաւորութեան ներքեւ է :

Յօդ. 7. Վեհա Սուլթանին վեհապետական իրաւանց կարգէն են հետեւեալ արտօնութիւնքը, նախարարները՝ կանուանէ ու կըհրաժարեցնէ, աստիճաններ պաշտօններ և պատուանշաններ կուտայ, առանձնաշնորհեալ դաւառաց իշխաններուն հաստատութեան հրովարտակ կուտայ անոնց շնորհուած արտօնութեանց որոշեալ ձև :

(1) Այս պաշտօնական հրատարակութիւնն բարձրագոյն հրամանաւ, եղած է աշխատութեամբ մեծաւ տեսրց Էլիաս Էֆենտիի Զայեմ եւ Պօղոս Էֆենտիի Պարնաւեան . յորոց առաջինն՝ Բ. Դրան արտաքին բրախկոյքեան արձանագրութեանց գրասենեկին տեսուիչ, եւ երկրորդն՝ տպագրութեան գրասենեկին երկրորդ տեսուիչն է :

«Եւ յետէ Աւաքելէնց Պօղոսին որդի պարոն Աւաքելին, յիշատակ իւրն, և զիւրն հանգուցեալ ծնող զհօրն Պօղոսի, որդի պարոն Աւաքելին, յիշատակ իւրն, զիւր հանգուցեալ ծնող զհօրն Պօղոսին և զկենդանի մօրն Վալիդային» :

Իսկ եկեղեցւոյ արտաքին դուռը բաւական փառաւոր տեսք ունի, գեղեցիկ մարմարեայ քարերով շինուած և բաց 'ի հայերէն յիշատակագրութեան գտնելի նաեւ դրան ճակատը Գաւրպան Աստուծոյ մի դոշտակաւ, և սուրբ Գրոց վերայ հաստատեալ : Նաեւ փառաւոր խաչ մի մէջտեղն, և այսպէս գրած, ԱՌՈԾ 1714 :

Այս դրան վրայ ևս հետեւեալ յիշատակագրութիւնը կըգտնուի :

«Վերստին նորոգեցաւ դուռս 'ի թուին... Հայոց Ռ. Զ. Բ. հանդերձ աստիճանք վերին և ներքին լուսամտք ծախիւք 'ի սոյն սուրբ Հոգի եկեղեցւոյ սպասաւորի, Վրնասի որդի Յովհաննէսի վարդապետի Ամասացւոյ 'ի վեշտաւան երրորդում ամի «ստրասաւորութեան իւրոյ, յիշատակ իւրն «և զիւր ննջեցեալ ծնողացն» :

Խիստ հետաքրքիր է իմանալ թէ ազգային սեփականութիւն մը որո՞ւ հրամանաւ վաճառուած էր . հետեւապէս առանց յապաղելու փութացայ ներկայանալ Գիթութեան քեռ նշանակած պարոնայց, և հետեւեալ տեղեկութիւնները ստացայ :

Պարոն թրափայլինս մեծ բարութեամբ հաղորդեց ինձ, թէ 'ի հաշիւ մի կրօնական ընկերութեան, երկու տարի առաջ գնած էր նոյն եկեղեցին 'ի գին 12,000 հօլանտական ֆլորինի :

Նոյնպէս պարոն Վերթհայմ իմացոյց ինձ թէ վաճառած էր նոյն եկեղեցին, Ամսգերտամի

ւերով, դրամ կըկոխէ, անունը մզկիթնեքուն մէջ կըկարդացուի հասարակաց աղօթից ժամանակ, տէրութեանց հետ դաշնադրութիւն կըլինէ, պատերազմ կըհրատարակէ, խաղաղութիւն կընէ, ցամաքային և ծովային զօրաց կըհրամայէ, զինուորական շարժումնք ընել կուտայ, Շէրիի և օրինաց տրամադրութիւնները գործադրել կուտայ, հասարակային վաղուք վերաբերեալ կանոններ կըհաստատէ, ռճաղատատեաններուն վճռած պատիժները կընրէ կամ կըթեթեցնէ, ընդհանուր ժողովը կըգումարէ կամ կերկարածդէ . և եթէ հարկաւոր դատէ, երեսփոխանաց ժողովը կըլուծէ՝ վերստին ընտրել տալու պայմանաւ :

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒԹՅՆԵՐ

Յօդ. 8. Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակներն առանց խտրութեան Օսմանցի կըլուծուին, ինչ որ ալ լինի անոնց դաւանած կրօնքը : Օսմանցիի հանգամանքը կըստացուի կամ կըլուծուի օրինաց որոշած պարագայից համեմատ :

Յօդ. 9. Ամեն օսմանցիք անհատական ազատութիւն կըվայելեն այն պայմանաւ որ այլոց ազատութեան վնաս չհասցնեն :

Յօդ. 10. Անհատական ազատութիւնը բացարձակապէս անբռնարարելի է, ոչ ոք կրնայ ինչ և ինչ պատրուակաւ օրինաց որոշած պարագաներէն և սահմանած ձևերէն դուրս որեւէ պատիժ կրել :

Յօդ. 11. Իսլամութիւնը Պետութեան կրօնն է : Պետութիւնն այս սկզբունքը պահպանելով հանդերձ՝ կայսրութեան մէջ ճանչուած ամեն կրօնից ազատ կիրառութիւնը կըպաշտպանէ և զանազան հասարակութեանց շնորհուած կրօնական առանձնաշնորհութիւններն հաստատ կըպահէ, այն պայմանաւ որ բարեկարգութեան և բարի վարուց վնաս չհասնի :

Յօդ. 12. Մամուլն ազատ է օրինաց դժած սահմաններուն մէջ :

Յօդ. 13. Օսմանցիք կարող են առեւտրական, արուեստական կամ մշակական ընկերութիւններ կազմել, օրինաց և կանոնադրութեանց որոշած սահմաններուն մէջ :

Յօդ. 14. Օսմանեան ազգութեան վերաբերող մէկ կամ քանի մ'անձինք իրաւունք ունին 'ի վնաս իրենց կամ հանրական շահուց դորձուած օրինազանցութեանց և կանոնազանցութեանց համար խնդրագիր մատուցանել ձեռնհաս իւր

Ռուսիոյ ընդհանուր հիւստատի միջնորդութեւ, յանուն և հրամանաւ վեհափառ սէր : Գէորգ կաթողիկոսին ամենայն Հայոց :

Իսկ պարոն Բուհն որուն հետ երկարօրէն տեսակցել հարկ եղաւ, 'ի սկզբան, խնդրեմ, ըսաւ, որո՞ւ հետ պատիւ ունիմ տեսնուելու :

Այցելութեան սոմնակս ներկայացնելով իրեն շնորհք քրէք Հայի մը որ հեռաւոր երկրէ կուգայ՝ չզլանալ այն տեղեկութիւններն որոնք իրեն համար մեծ արժէք ունին :

Այս պատկառելի անձը մարդասիրաբար հետեւալը հաղորդեց ինձ .

1856 Նոյեմբեր 12ին Ամսգերտամի դատաստանական ատենը ինձ յանձնեց Հայոց եկեղեցւոյ վերատեսչութիւնը : Նոյն ժամանակ եկեղեցին իրեն սեփականութիւն ունէր պատրաստ փոքրիկ դուռ մի, որուն տոկոսիքով սպասաւորի մի վարձքը կըվճարուէր . սակայն ըստորում Ամսգերտամի մէջ ոչ մի Հայ կամ Հայ ընտանիք կըգտնուէր, հետեւեալը եկեղեցին միշտ պարապ էր :

Արդ եկեղեցւոյ վերատեսչութիւնն ինձ յանձնուելէ զինի, փոխանակ զուր տեղը սպասաւորի վարձք վճարելու, ջանացի և յաջողեցայ կրօնական մի ընկերութեան վարձել նոյնը, ինչպէս նաեւ եկեղեցւոյ մտաւոր, և այս կերպիւ արդիւնաւորեցի եկեղեցւոյ հասոյթը . և վարձքէ և տոկոսիքներէ արդագրեալ գումարն մինչև 15 000 հօլանտական ֆլորինի բարձրացաւ :

Մի քանի տարի առաջ, ըսաւ, քաղքիս Ռուսիոյ հիւպատոսի միջնորդութեամբ և ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանաւ վաճառեցաւ նոյն եկեղեցին կրօնական միոյ ընկերութեան :

խանութեանց, նմանապէս կրնան տէրութեան պաշտօնատարաց ընթացքէն դանդաղեալ համար բողոքող ձևով ստորագրեալ խնդրագիր մատուցանել օսմանեան ընդհանուր ժողովին:

Յօդ. 15. Ուսումն ազատ է: Ամեն օսմանցի կրնայ հասարակային կամ մասնաւոր դաստիարակութիւն ընել օրինաց համաձայն վարութեամբ:

Յօդ. 16. Ամեն վարժարանք Պետութեան հսկողութեան ներքեւ են: Համայն օսմանցեաց տրուած ուսումը կանոնաւորելու և միացնելու միջոցներ պիտի խորհուրդն: Բայց զանազան հասարակութեաց կրօնաւորումները պիտի դպչուի:

Յօդ. 17. Ամեն օսմանցիք հաւանար են օրինաց առջեւ, միեւնոյն իրաւունքն ու պարտականութիւններն ունին առ երկիրն՝ առանց կրօնի վերաբերեալ իրաց դպչելու:

Յօդ. 18. Հասարակային պաշտամանք մէջ ընդունուելու պայմանն է թուրքերէն լեզուն գիտնալ, որ Պետութեան պաշտօնաւորներն են:

Յօդ. 19. Ամեն օսմանցիք հասարակային պաշտօններու կրնուին իրենց ընդունակութեան, արժանեաց և յաջողակութեան համեմատ:

Յօդ. 20. Տրոյց որոշումն ու բաշխումն օրինաց և յատուկ կանոնադրութեանց համաձայն կհաստատուին, իւրաքանչիւր հանգանակողի կարողութեան համեմատ:

Յօդ. 21. Ծառքական և անշարժ գոյից կանոնաւորապէս հաստատեալ սեփականութիւնն երաշխաւորեալ է:

Մէկու մ'անշարժ սեփականութիւնը չկրնար ձեռքէն առնուիլ, բայց միայն օրինաւորապէս հաստատեալ հասարակային օգտի համար, արձանաց օրինաց համաձայն կանոնաւորութեամբ:

Յօդ. 22. Բնակարանն անբռնաբարելի է: Իշխանութիւնն օրինաց որոշած պարագաներէն դուրս չկրնար որեւէ մէկու մը բնակարանը ընդունելու մասնել:

Յօդ. 23. Բնաւ մէկը չկրնար ստիպուիլ, որ դատաւարութեան համար հաստատուելիք օրինաց համեմատ ձեռնհասութիւն ունեցող ատենէն զատ ուրիշ ատենի մը առջեւ դատ վարէ:

Յօդ. 24. Ընչից գրաւումը, տարապարհակն ու տուգանքն արգելուած են: Սակայն պատեալ ժամանակ օրինաւորապէս հաւաքուած հանգանակութիւնք և պատերազմական վիճակէն հարկադրեալ միջոցներն այս տրամադրութեանէն բացառուած են:

Յօդ. 25. Հարկի՝ տուրքի կամ ուրիշ որեւիցէ անուամբ դրամ չկրնար երբեք հաւաքուիլ առանց յատուկ օրէնքի:

Ի վին 12.000 հօլանտական ֆիօրինի, և թէ այս գումարը և թէ եկեղեցւոյ սեփական պատրաստ գումարը 15.000 ֆիօրինի չափ, ինչպէս նաև մի քանի հայերէն գիրքեր, ոսկեթել զգեստներ, երկու պատկեր և այլն, Ռուսիոյ Վոլոգդայի յանձնուեցան՝ իշխանայն ամենայն չայոց կաթողիկոսին խրկուելու համար:

Նորին վեհա. Սրբազնութիւնը հրամայեց և պահանջեց ի վաճառման դաշնագրոյն մէջ նշանակել, և մասնաւոր պայմանաւ հաստատել, որ զոյգ կրօնական ընկերութիւնը, որ գնած է այն եկեղեցին, եթէ պարտաւորի երբեք ուրիշ վաճառել, եկեղեցւոյ արտաքին և ներքին բանց վրայ եղած հայերէն յիշատակագրութեամբ քարերը Նորին վեհա. Սրբազնութեան ամենին ներքեւ պիտի դրուին:

Այս ազնիւ և բարի անձին (պարոն Գուհնի) չայոց եկեղեցւոյ 18 տարուան միջոցի մէջ մասնաւոր հաւատարմութեան համար, որչափ և առաջարկութեամբ վեհա. կաթողիկոսին Հայոց, Ռուսիոյ կայսերական կառավարութիւնն մի պատուանշան շնորհած է նմա:

Չկամի՞նք այսպիսի ազգային հաստատութեան վաճառման խնդրոյն վերայ դիտողութիւնը ընելաւոր, միայն թէ կը յուսամք որ Նորին վեհա. Սրբազնութիւնը այս Ամադ. երտամի եկեղեցին արտադրեալ գումարը ազգային այնպիսի հաստատութեան համար գործածած լինի, որով Ամադ. երտամի Հայոց յիշատակը անմահաց

Յօդ. 26. Որեւիցէ ձեւերով տանջանք և չարչարանք բողոքողին բացարձակապէս արգելուելն:

ՆԱԽԱՐԱՐ

Յօդ. 27. Վեհա. Սուլթանը Մեծ—Եպարդոսի և Շէյխիւլ—Իսլամի պաշտօնները կը յանձնէ իւր բարձր վստահութեան արժանի դատած անձերու: Միւս նախարարները կայսերական հրամանաւ (իրատէ) կանուանին:

Յօդ. 28. Նախարարաց խորհուրդը Մեծ—Եպարդոսի նախագահութեան ներքեւ կգումարի: Նախարարաց խորհուրդն իրաւասութեան սահմանին մէջ են Պետութեան բոլոր կարեւոր գործերը, ներքին և արտաքին:

Իւր այն որոշումներն՝ որք վեհա. Սուլթանին հաւանութեանը պիտի ներկայացուին, կայսերական իրատէսով գործադրելի կըլինին:

Յօդ. 29. Իւրաքանչիւր նախարար իւր իրաւասութեան սահմանին մէջ իւր պաշտօնին վերաբերեալ գործերը կը կարգադրէ:

Այս սահմանն անցնող գործերու համար Մեծ Եպարդոսին կը դիմէ:

Մեծ—Եպարդոսը զանազան պաշտօնատանց գլուխներէն առ ինքն ուղղեալ տեղեկագրերը գործադրել կուտայ, եթէ պէտք ըլլայ՝ նախարարաց խորհուրդն և յետոյ կայսերական հաւանութեան ներկայացնելով զանոնք, կամ՝ եթէ հարկ չէ՝ ինք անձամբ որոշելով կամ միայն վեհ. Սուլթանին հաւանութեան ներկայացնելով:

Մասնաւոր կանոնադրութիւն մ'այս զանազան տեսակ գործերն իւրաքանչիւր նախարարական պաշտօնատանց համար պիտի որոշէ:

Յօդ. 30. Նախարարք պատմութեամբ տեղեկութեան իրենց վարչութեան վերաբերեալ իրաց և գործոց համար:

Յօդ. 31. Եթէ երեսփոխանական ժողովոյ անդամներէն մին կամ շատերը նախարարի մը դէմ բողոք բառնալ ուզեն անոր պատմութեան նախագահութեան պատճառաւ և այնպիսի գործոց առթիւ զորս խորհրդարանն իրաւունք ունի ընկելու, բողոքագիրը նախագահին կը տրուի, որ զայն կը յղէ երեք աւուր մէջ այն դիւանին որ ըստ ներքին կանոնադրութեան ժողովոյն պաշտօն ունի բողոքը ընկելու և որոշելու թէ հարկ է խորհրդարանին պիտարտութեան ներկայացնել զայն: Դիւանին որոշումը քուէից առաւելութեամբ կըլլայ, ամբաստանեալ նախարարէն պէտք եղած տեղեկութիւններն ու բացատրութիւններն առնուելէ ետեւ:

Եթէ դիւանը յարմար գտնի բողոքը խորհրդարանին ներկայացնել, այս որոշումը հաստատող տեղեկագիրն հրապարակային նիստի մէջ կը կարգադրուի, և խորհրդարանը, ամբաստանեալ նախարարին՝ որ ներկայ գտնուելու պիտի հրաւիրուի, կամ անոր փոխանորդին բացատրութիւնները լսելէ ետեւ, ներկայ երեսփոխանաց երկու երրորդին բացարձակ առաւելութեամբ կը քուէարկէ տեղեկագրին եղրակացութիւնները: Եթէ այն եղրակացութիւններն ընդունուին, ամբաստանեալ նախարարը դատաւարանի ենթարկուլ ուղերձ մը կը ըրկուի Մեծ—Եպարդոսին, որ վեհա. Սուլթանին հաւանութեան կը ներկայացնէ զայն, և բարձրագոյն ատենին առջեւ յղումը կայսերական իրատէսով կըլլայ:

Յօդ. 32. Մասնաւոր օրէնք մը պիտի որոշէ նախարարաց դատման եղանակը:

Յօդ. 33. Բնաւ տարբերութիւն չկայ նախարարաց և անհատից մէջ մասնաւոր դատերու նկատմամբ՝ որք անոնց պաշտօնէն դուրս են:

Այս տեսակ դատերը սովորական ատեններու կը յանձնուին:

Յօդ. 34. Այն նախարարն որոյ դատաւարանին ենթարկուամբ որոշուած է բարձրագոյն ատենին ամբաստանութեան դատարանէն, իւր պաշտօնէն կը դադարի, մինչև որ իրեն դէմ եղած ամբաստանութեան անպարտ ելնէ:

Յօդ. 35. Եթէ երեսփոխանաց ժողովը պատճառարանաւ քուէով մը մերժէ օրինաց ծրագիր մը, որուն ընդունելութեան վրայ նախարարք պիտի հարկ կը համարին, վեհա. Սուլթանն, իւր վեհապետական իրաւամբ՝ նախարարաց փոփոխութիւնը կամ խորհրդարանին

լուծումը կը հրամայէ՝ օրինաց որոշած պայմանաւ ժամին մէջ՝ երեսփոխանները վերընտրելու պայմանաւ:

(Պիտի շարունակուի)

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ ֆոն. Սրբազնութիւնը կը ձեռնարկէ իր հաւանական թէ փարիզի դեսպանութեան պաշտօնն Օտեան վեհ. Գրիգոր Էֆէնտիին պիտի յանձնուի, որ այժմ ի Լոնտոն կը գտնուի:

Մեք եւրոպական օրագրի մը մէջ հետեւեալը կը նշուի՝ ի մասին Նորին վստահութեան:

«Օտեան Էֆէնտին ի Լոնտոն դնաց փոխառութիւն մի ընելու պատճառաւ, բայց հաւանականաբար իւր ճանապարհորդութեան նըպատակն է անձամբ ինքզինքն յանձնել Պիքընսֆիլտ լորտին իրեն բարեյարմար կուսակալ Պուլլարիոյ: Անցեալ դարունէն ի վեր որոշուած և յանձնուած էր նմա այս ծանրակշիռ պաշտօնը՝ սակայն որ և է պատճառաւ չուղեց ընդունել զայն յայնժամ»:

—Չմիւսնացի մեծաշնորհ Աշտեկեան Մարկոս Էֆէնտին՝ որում երկրորդ կարգի միւլթէմայիզի աստիճան շնորհեցաւ ի Բարձրագոյն Դրանէ, Մեծ—Եպարդոսական հրամանագրով՝ վանի կուսակալութեան օգնական պաշտօնեաց (միւլթէմայիզի) կարգեցաւ:

—Կիմանամք թէ Կ. Պօլսոյ Գաղղիոյ դեսպանն անցեալ ամսոյ 24ին փոխադարձ այցելութեան դնացեալ է ամենա. Ս. Պատրիարք Զօր մերում ի Գումգափու. բայց Նորին Սրբազնութիւնն ինչպէս նաև փոխանորդ տէր Հայրն՝ բացակայ գտնուելով անտի, Նորին վստահութիւնն իւր այցելոման թողեր է:

—«Կիրակի օրն (26 Դեկ.) Գաղաքական ժողովոյ մէջ, կըսէ ֆոն. Ս, առաջարկուեց ի Գումգափուի Պատրիարքարանը պարպել և Պալատիոյ նորակառոյց կեդրոնական վարժարանը Պատրիարքարանի վերածել՝ սակայն Ս. Պատրիարք Հայրը դիտողութիւն ըրեր է, թէ այսպիսի տեղափոխութիւն մը եթէ երբեք կարեւոր է, ազգային ընդհանուր ժողովոյ հաւանութեամբն ու որոշմամբ պէտք է ընել»:

—Յիշեալ լրագրոյն մէջ դարձեալ զհետեւեալ կը նշուի:

(Կ. Պօլսոյ) «Իթիֆի ՀԱՏ տաճիկ լրագիրն ստորագրելու է առած կը գրէ թէ՛ Հայոց Պատրիարքին յորդոր և գրգիւ եղեր է դեսպանատեղութիւն դանդաղել Ասիոյ մէջ Հայոց եղած ինչ ինչ դէպքեանց համար. սակայն նա պատասխանեց թէ՛ այս մեր ազգին դանդաղանաց տեղի տուող ինչ ինչ դէպքեր կան. բայց այս գանգաւոր մեր կառավարութեան կըսենք և դարմանը մեր կառավարութեան կըսենք և կըսենք, որ իշխանութեան ձեռք բերելիք որեւէ փոփոխութեանց ներքեւ գտնուող Հայոց ամենէն երջանիկ մասը՝ օսմանեան Հայոց ըլլալը ախարհ կը տեսնէ: Եթէ դեսպանատեղութիւն խնդիր մը ունենալ պէտք ըլլայ, այն ալ Ռուսիոյ մէջ գըտնուած Հայոց՝ օսմանեան Հայոց չափ բարեկեցիկ վիճակ մ'ունենալու համար պէտք կըլլայ»:

—«Կիմանամք, կըսէ Լ. Ս. Պատրիարք, թէ իրաւաստեմայն ամենա. տէր Երայի Ս. Պատրիարքը սուրբ Տեղեաց մէջ ազգային իրաւանց բռնաբարութեւն ու անարդարութեւն դէմ ըրած բողոքանաց մինչև ցարդ ազգային միալին յուսահատելով հրաժարական տուեր և յատուկ նամակաւ մ'ալ ծանուցեր է վարչութեան: Երուսաղէմայ պատուարժան Միաբանութիւնը գոհ ըլլալով միշտ Ս. Երայի Պատրիարքէն, չէ ընդունել անոր հրաժարականը և վարչութեան ալ խնդրեր է որ չընդունի: Գաղաքական ժողովն ուրբաթ աւուր նստին մէջ այն ծանր իրաւութեան վրայ խորհելով, որոշեց խնդրել Երուսաղէմայ սրբազան Պատրիարքէն որ հրաժարականն ետ առնու, փոխադասելով զինք թէ Կեդրոնական վարչութիւնն ալ իւր ձեռքէն եկած ջանքը չի պիտի խնայէ՝ երբեք ի պաշտպանութիւն ազգային իրաւանց»:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Բամպակին գիներն երթալով բարձրացան և մեքենայով մաքրուածը մինչև 370 շուրուշի վաճառեցաւ առ կենդինարն . իսկ Ատանայի բամպակը՝ 360 շուրուշի է :

Ափիօնէն յանցելով շարժութիւն 130 կողովը և յայտն շարժութիւն 40 կողովը վաճառեցան ի գին 175 շուրուշից առ չեքին հասարակ տեսակն և 180ի Գառահիսարինը : Ի շուկայի մերում հաղիւ թէ 1100 կողով ափիօն գտանի այժմ . փալամուտէն , Բէօքայոյէն և ճէհրէն վաճառունք չեղեն :

ՀԻՒԱՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՍԵՐ



ԳԵՂԱՆՍՏԻ ՀՈՂՈՒԹԻՒՆ

ՋԵՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԻՆԻՑԻՆԵՐ

Մարդոց ջղային գրութեան (սիւնի) շատ յոգան ըստը ստակալի ախտ մըն է և զիջերուն ամենափոքրիկ շարժումը կամ զոր գրութեանը վշտալի է յոյժ . վառն զի ուր գտնելու է անոր գինը : — Միակ դեղը այս է . քիչ խմէ գինի , դարձեալ ուր և ուրից ըմպի . և աւելի աղէկ կ'ըլլայ որ ընդորովին հեռանա տնոցմէ , և ամենեւին չխմես . նմանապէս խաճճէ մի խմելու և անտեղ թեթեւ թեթեւ (չայ) դո՛հ եղեր : Կարելի եղածին շփմաբուր օդ ծծէ ամեն գիշեր իմ դեղահատերէս երեք կամ չորս հատ կ'ըլլէ , շատ միս կեր և համեմունք (սաւա) : Տեղի կեցիք ի յիշ այս օգտակար կանոնները . ճշգրութեամբ ի գործ դնելու ըստ , միտքդ շուտով պիտի հանդստանայ , մարմնդ առողջ պիտի ըլլայ և պիտի մոռնաս թէ ջղաց շարժումն ունեցար :

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԵՐ ԵՐԿԱՄԱՆՆԵՐ

Այս գործարանաց վերարդեալ ամեն հիւանդութեանց հղթն կ'ըզկանք չափէն աւելի ջրալից կ'ըլլան կամ բաւական չին լալ , թէ բարձր կամ աւագը երկկամանց կը հասնին կամ թէ անոց մեջցաւեր կը գոյանան մէջքին համապատասխանած մասը : Այս ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլլ օուէի դեղահատերը և անոնք ապեալ հրահանգաց համաժողով անոր սպեղանիովը լալի երկկամանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը : Այս դարձանք անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ , այնինչ ուրիշ դեղերը դուրս տեղը գործածուած պիտի ըլլան :

ՍՏԱՄԻՔՈՒՆ ԵՐԿԱՄԱՆՆԵՐ

Որ և է դեղը մի շերտար ստամոքսի գրութեանը նորոգել և աղէկցնել զայն շուտով : Ինչպէս այս դեղահատերը . որոնք անորոք խաւնութեան կամ վատթար կերակուրէ պատճառուած բուր թեթեւութեան կը զգանք և կը հասնին ի լալորն (հարա ճիշդ) : Եւ անոնք գործողութիւնը կը կարգադրեն . չեղերու ստամոքսի կանոն (սփալ) դեպքերու մէջ սքանչելի ներգործութիւն մի ունի և լեզու ու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

ԲՈՐՈՒԹԻՒՄՆ ԹՈՒԲԵՐՈՒԹԻՒՆ (դրեւիտ) ՀԱՁ ԵՒ ՀԱՐՈՒԹԻՒՆ

Հիւանդութեան վերարդեալ գործարանաց հիւանդութեանց ամեն ախտէն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վտանգաւոր է : Ասոց գործողութեանց անկարգ ընթացքին առաջինը շանքերը կրնան միշտ կարգադրուիլ Հոլլ օուէի հաշկարու դեղահատից միջոցաւ : Ասոնք շուտով կը գոյանան արեան ուր և է օտ ժամանակեայ անշարժութիւնը , կը թեթեւանայ խոցած շնչառութեանը , կը բարեխառնեն շնչառութեան ստամոքսի արագութեանը և կորոզութիւն կուտան շնչառութեան ու թոքերուն դերութեանը ու կ'ունենաւորապէս գործելու : Այս դեղահատերը իրենց մարդկային զօրութեամբ կը սրեն արեւը ամեն աղտոտութիւններէ , և որ եղանակաւ կը գործանեն զգրութեանը (սիւնի) ընդդէմ ծխախոտի ախտի , շնչառութեան թանցի , և ուրիշ թոքային սկզբնականութեանց :

ՏԿԱՐԱՅԵԱՆ ՄԱՐԳԻՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆԻՑԻՆԵՐ

Տկարութեան , թուրութեան և ջղացառութեան դեպքերու մէջ , որոնք որ և է անկան կամ գերնական շափալանցութեանը ասոց եկած են , այս դեղահատերը այլովիչ և նորոգիչ ներգործութիւնը մեծապէս օգտակար է . քանզի մարդոցութիւնը կը վերահաստատէ , մարմնին ամեն հիւանդութեանը կը կանխուորէ , ջղային գրութեանը կը զօրացնէ , հիւանդին միտքը կը յարգարէ և վերապէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

ՀՈՂՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՆՍՏԻՆԵՐ ԵՒ ՕԳՈՒԿԱՐ ԳԵՂԵՐՆ ԵՒ ՀԻՒԱՆԴԻՆ

Հիւանդութեանց համար . Շնչառութեան , Յօդացառութեան , Թոքացառութեան , Մարմնային ախտ , Տեղատեղութեան , Ցաւը որովայնի , Խիթ (սաւա) , Զրգուրութեան , Միզարգելութեան , Հարբուրդ , Անմարդողութեան , Բարբոքութեան , Ծիրակն ախտ , Դաւուկն , Ախտը ընդերաց , Թանց (սփալ) , Բախտիւն սրտի , Անկանոնութեանը կ'ըլլալ պարանոցի , Բար կամ ինճ միջա- նայ , Վերնոտութեան , Նոցի , Մորթային հիւանդութեան , Լերդի հիւանդութեանը Գլխացառութեան , Թիւնք , Փողացալ , Ափորդիտեան ախտ , Նոցուրութեան , Գլխուլ արժան է որ տպեալ հրահանգներ կան ամեն ինչով որոցմէ մէկ հաս կը գտնուի իւրարանչելու տուիին մէջ ի տեղի կու թիւն հիւանդաց , ամեն պարագայից մէջ :

Այս դեղահատերը , որ կ'ըլլան շուրուշի 1 և 1/2 անգամ վերատեսչութեամբ , կ'ըլլան իւր գործարանը ի Լիւնտեն , Օքսֆորդ կողմէ փողոցը թիւ 533 , ի գին 1 և 1/2 անգամ շուրուշի , 2 5/8 և 4 1/2 շուրուշի տուիլ , ըստ մեծութեան ամաց :

Խմբողիք—տնի լրագրող :

Գլխաւ Գ . Պալ Գլխաւ :

Ի ՏԳԱՐԱՅԵԱՆ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

—«Տփլիսի ՄՇԱՆ շարժալիքները կը ծանուցանէ թէ տեղւոյն Հայ հասարակութիւնն ուղեւոր մի մատուցեր է Ռուսիոյ կայսեր ինդերերով որ թուրքիոյ Հայոց վիճակն ալ նկատողութեան տալուի դեպքանախորհրդին մէջ : Կայսրն ալ ի պատասխանի այս ուղեւորին , հեռագրով չնորհակալութիւն յայտնեց է՝ Հայոց :

«Գոհ ենք որ Ռուսիաբնակ ազգայինք իրենց թուրքիաբնակ եղբարց վրայ ունեցած վերմ համակրութիւնն այս առթիւ ալ յայտնել փութացեր են . և աւելի գոհ ենք որ ինչ տեսութեամբ որ թուրքիոյ Հայ ազգը նկատած է ինդերը , նոյն տեսութեամբ նկատած են նաև մեր Ռուսիաբնակ ազգայինք . այսինքն՝ Հայոց վիճակին բարեփոխումը ալ տեղութեանց ուշադրութեան տալուից իրաւանց և արդարութեան համաձայն՝ առանց խորութիւն դրնելու տեղութեան հպատակ ժողովրդոց մէջ» :

ՄԱՍԻՍ

ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԶԱԽՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՀՆԴԱՄԱՆՍԱՆ

Պէնկալա դաւառին մէջ Դաքքա անուն վաճառաւոր քաղաք մի կայ , ուր երեք ազգային զլխաւոր և պարկեշտ ընտանիք գտանէին , որք ի նախահարց իւրեանց ժառանգեալ ընդարձակ կալուածական գոյւղը և ուրիշ ճոխութեամբ պատուաւոր կերպիւ կապէին , կըլաւաւարէին զազգային եկեղեցին և հաստատուն կը պահէին զվաղեմի պատիւ Հայ ազգին : Անուանք սոցա են պարոնայք Նիկի Պողոս Յովակիմեան , Դրի . Պողոսեան և Յովհաննէս Ստեփաննոսեան :

Արդ ցաւօք սրտի կիմանամբ թէ ի յիշեալ հայկազուն վաճառականաց առաջինն՝ ծանր պարտուց ներքե մնալով՝ (սոցա գումարն 140,000 անգղի . իւռայից կը հասնի կըսեն) , ի մտաւորութեանէ և ի խորին տրտմութեանէ սրտի կը հիւանդանայ և կը մեռնի : Երկրորդն՝ որ աղքատից է հանգուցելոյն , երայնաւոր գտնուելով նմա՝ ոչ սակաւ վնասուց ենթարկեալ է . և որպէս թէ այս ցաւն բաւական չինէր , բարոյական մեծ կակիծ մի ևս ունեցաւ մահուամբ ամենասիրելի որդւոյն իւրոյ : Իսկ երրորդն՝ այսինքն Պ . Յովհաննէս Ստեփաննոսեան , կաթուածի յանկարծահաս մահուամբ զրաւի ի կենաց :

Ահա այս կերպիւ Դաքքայի Հայ ազգութեան հրազը՝ դժբաղդաբար , յիշեալ կը համարի այժմ , և տեղւոյն ազգային եկեղեցւոյն և քահանային պահպանութեան միջոցներն բոլորովին կըլաւակին . քանզի՝ լաճնուս նայելով , մնացեալ փոքրամիջ համագրի ժողովուրդն՝ ի պատճառաւ աղքատութեան , իւր պարուստն և իւր անհրաժեշտ պիտոյքն անգամ հոգալու անբաւական է :

Դաքքայի համայնաց մէջ երկու անտառային և մացառոտ կղզիք դոն , ուր արգիւնաբեր ընդարձակ ագարակք և կալուածք գտանէին , յորոց մի մասն մերագնէից վերադերէր :

Վերջացեալ ամին Նոյեմբերի սկիզբն գիշեր ժամանակ ահագին փոթորիկ մի ելլելով , ծովուն ջուրքը գրեթէ 30 ոտնաչափ կը բարձրանան և կը լիսնեն զյիշեալ կղզիքն , աւերելով քանդելով զամենայն ինչ և յրահեղձ ընելով զամենայն բանական և զանբան կենդանիս : Այս նոր տեսակ ջրհեղեղին զոհ եղող մարդոց թիւն՝ ըստ տեղութեան յայտարարութեան , 215,000ի կը հասնի . որոց մէջ տասն հոգիք կը գտնուին յազգայնոց մերոց :

Ի Հնդկաստանէ ընկալեալ թղթակցութիւն մեր՝ ահա այսպիսի աղետային եղելութիւններ կը պարունակէ , որոց ոչ վարանեցաք Ագային Նոր Երկրորդի վերնագիրն տալ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԻԻՆԱԼԻ ՄԱՐԻԻԶՈՒՀԻՆ

Վիպասանական գեղեցիկ աշխատասիրութիւն մըն է , Տաշ կոմսոսեան ճարտար և բեղմնաւոր գրչին խոսք : Այս գործոյն բաց ի սիրահարական մասէն , որ խիստ ազգայն կերպիւ նկարագրուած է , յիշեալ ճեղքից կոմսոսեան իրեն գլխաւոր նպատակ քրաժեամբական կենաց շատագոյնութիւնն , որոյ ըզքացործութիւնն հոգակելով , կը հաստատուէ քի նարա

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԻՔ

Զմիւռնիա , 8 Յունվար :

Դրեթէ ամեն շարժալիք անպակաս բեռնի գործ կու գան ի ներքին կողմանց մեր վիճակին և անյապաղ կը յուղարկուին ի Կ . Պոլիս : Կը հաւատան թէ մինչև ցայսօր ընդամենայն 98 հազար զօրք հասեր են Այսթընի գաւառէն և Կարամանի հիւսիսային կողմէն . և եթէ հարկը պահանջէ՝ տակաւին 40,000 մարդիկ պատրաստ են եղեր զէնք առնուլ ի պաշտպանութիւն հայրենեաց :

—Յանցելով շարժութիւն շքեղ և վառաւոր պարահանդէս մի տրուեցաւ ի Պուռնովա գեղն յամարանոցն միտքը վաղեմի անգղիացի երեւելի վաճառականին ի պատիւ Տրիւմֆալ ծովապետին որ ինչպէս յայտնի է , Միջերկրական ծովուն անգղիական նաւատորմին ընդհանուր հրամանատարն է :

—Յիշեալ ծովապետն՝ նախքան զմեկնին ի քաղաքէն հաճեցաւ ընկերութեամբ միտքը ծովի Անգղիոյ փոխ—հրապատոյն , այցելութիւն ընել քաղաքիս Յունաց ազգային մայր դպրոցին Գրքատան և հնութեանց թանգարանին , ուր ի մէջ այլևայլ հետաքրքրական հնութեանց , կը գտնուի նաև երկուսասաներորդ դարուն ձեռագիր Աստուածաշունչ մատեան մի մագաղաթի վերայ գրեալ :

—Զինի առատ և շարունակ անձրեաց , երեկուանէ ի վեր օդը պարզեցաւ , արեւն իւր կենդանարար ճառագայթները կտարածէ ամենայն ուրեք այն աստիճան որ գիտես թէ գարնան մէջ կը գտնուիմք : Մինչև ցայսօր տակաւին զգալի ցուրտ մի չըրաւ , և Սանթիկիտոյ ջերմութիւն 12 աստիճան կը չանալէ ստուերի ներքեւ :

—Կիրակի երեկոյն «Քարտան Բաւլի» կոչուած սրճարանին մէջ սաստիկ կուր մի պատահելով ի մէջ գաղղիացի և գերմանացի նաւաստեաց , որք քիչ կամ շատ արեւալ էին , այս ետքիններէն մէկը ծանրապէս վիրաւորեցաւ և հետեւեալ օրն մեռաւ :

—Կ . Պոլսէն հասեալ վերջին լուրքն կը ծանուցանեն թէ ի Բարձրագոյն Դուռն մեծ ժողով մի գումարուեր է բաղկացեալ ի գլխաւոր պաշտօնատարաց , յորոց 140ն մահմէտական և 60ն քրիստոնեայ : Այս ժողովոյն մէջ դեպքանախորհրդային առաջարկութեանց վերայ երկար վիճաբանութիւն և քննութիւն լինելէն ետքը , ժողովոյն անդամոց խիստ մեծագոյն մասին և գրեթէ բոլորին հաւանութեամբը մերժուեր են յիշեալ առաջարկութիւնքն :

—Կ . Պոլսէն կը գրեն թէ Հունգարացի ուսանողաց պատգամաւորութիւնն հասեր է ի նոյն մայրաքաղաքն և մատուցեր է բարձրագոյն Սպարտի—Բէրլինի պաշտպան յանուն հունգարացի ուսանողաց Բէլքիայի՝ զպատուոյ ուրն ի յիշատակ նշանաւոր յաղթութեանց՝ զորս Ն . Բարձրութիւնն տարաւ ի վերայ Սերբիացոց :

Աւելորդ կը համարուի յառաջ բերել թէ յիշեալ պատգամաւորութիւնն եռանդուն և համակրական սիրով և մեծ պատուով ընդունուեր է ի Կ . Պոլիս ի բոլոր օսմանցի ժողովրդոց և ի կայսերական կառավարութեանէն . որոյ հիւրն պիտի լինի յորչափ որ Պոլիս պիտի մնայ :